Հավելված N 18
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության
նախարարության գլխավոր քարտուղարի
2025 թվականի սեպտեմբերի 25-ի N 745-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) թվայնացման վարչության (այսուհետ՝ Վարչություն) կիբեռանվտանգության բաժնի (այսուհետ՝ Բաժին) մասնագետ **(ծածկագիր՝ 24-32.1-Մ6-3)**:

1.2. Ենթակա և հաշվետու է
Մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները
Մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի ավագ մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը
ՀՀ, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան,Վ.Սարգսյան 3/3

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

1) Մասնակցում է կիբեռանվտանգության միասնական քաղաքականության, օրենսդրության, գործողությունների ծրագրերի, կիբեռհասունության բարձրացման միջոցառումների և համապատասխան միջազգային պարտավորությունների կատարման իրականացմանը,
2) Մասնակցում է ամպային ծառայությունների միասնական քաղաքականության, ստանդարտների, սկզբունքների և տեխնիկական ենթակառուցվածքի ձևավորման միջոցառումների մշակմանը և իրականացմանը,
3) Մասնակցում է արհեստական բանականության և տվյալագիտության, կիբեռանվտանգության և հարակից ոլորտներում միջազգային և միջգերատեսչական հանձնաժողովներին, համագործակցային հարթակներին, պայմանագրերի և ծրագրերի մշակման գործընթացներին,
4) Մասնակցում է արհեստական բանականության, տվյալագիտության, կիբեռանվտանգության և հարակից ոլորտներում միջպետական համագործակցության ծրագրերի պլանավորման, համակարգման, մշտադիտարկման և գնահատման աշխատանքներ,
5) Մասանակցում է արհեստական բանականության կիրառման ցուցանիշների հիման վրա իրականացվող մասնագիտական վերլուծությանը:

Իրավունքները՝

1) Ուսումնասիրել կիբեռանվտանգության, տվյալների միասնական քաղաքականության և ամպային ծառայությունների միասնական քաղաքականության, ռազմավարությունների մշակման նպատակով

պետական կառավարման համակարգի մարմիններից ստացված տեղեկատվությունը և ներկայացնել առաջարկություն,

2) արհեստական բանականության և տվյալագիտության, կիբեռանվտանգության և հարակից ոլորտներում միջազգային և միջգերատեսչական հանձնաժողովներին, համագործակցային հարթակներին, պայմանագրերի և ծրագրերի մշակման նպատակով պետական կառավարման համակարգի մարմիններից ստանված տեղեկատվությունը,
3) ուսումնասիրել արհեստական բանականության կիրառման ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը և ներկայացնել առաջարկություն:

Պարտականությունները՝

1) աջակցել կիբեռանվտանգության միասնական քաղաքականության, օրենսդրության, գործողությունների ծրագրերի, կիբեռհասունության բարձրացման միջոցառումների և համապատասխան միջազգային պարտավորությունների կատարման իրականացմանը,
2) աջակցել ամպային ծառայությունների միասնական քաղաքականության, ստանդարտների, սկզբունքների և տեխնիկական ենթակառուցվածքի ձևավորման միջոցառումների մշակմանը և իրականացմանը,
3) աջակցել լ արհեստական բանականության և տվյալագիտության, կիբեռանվտանգության և հարակից ոլորտներում միջազգային և միջգերատեսչական հանձնաժողովներին, համագործակցային հարթակներին, պայմանագրերի և ծրագրերի մշակման գործընթացներին,
4) աջակցել արհեստական բանականության, տվյալագիտության, կիբեռանվտանգության և հարակից ոլորտներում միջպետական համագործակցության ծրագրերի պլանավորմանը, համակարգմանը, մշտադիտարկմանը և գնահատմանը,
5) աջակցել արհեստական բանականության կիրառման ցուցանիշների հիման վրա իրականացվող մասնագիտական վերլուծությանը:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Առնվազն միջնակարգ կրթություն:

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Աշխատանքային ստաժ չի պահանջվում:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Հաշվետվությունների մշակում
2. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
3. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Ժամանակի կառավարում
2. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում է տվյալ մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տվյալ մարմնից դուրս որպես ներկայացուցիչ շփվում է պատվիրակված լիազորությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է մասնագիտական խնդիրների բացահայտմանը և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն: